

Գլուխ VI

Հաջորդ դասախոսություններից մեկը սկսվեց ներկա գտնվողներից մեկի հարցից.

«Ո՞րն է նրա ուսմունքի նպատակը:»

- Ես իհարկե ունեմ իմ նպատակը, - ասեց Գ.-ն: Բայց թույլ տվեք այդ մասին չխոսել: Ներկայիս պահին իմ նպատակը որևէ նշանակություն ձեզ համար չի կարող ունենալ, քանի որ կարևոր է, որպեսզի դուք ինքներդ ձեր նպատակները սահմանեք: *Ուսմունքը որպես այդպիսին նպատակ չի կարող հետապնդել:*

Այն կարող է միայն մարդկանց ցույց տալ իրենց նպատակներին, ինչ էլ որ դրանք լինեն, հասնելու լավագույն ճանապարհը: Նպատակի հարցը շատ կարևոր հարց է: Մինչև մարդը որևիցե նպատակ չսահմանի իր համար, նա չի կարողանա նույնիսկ որևէ բան «անել»: Ինչպե՞ս կարելի է որևիցե բան անել՝ չունենալով որևէ նպատակ: Ամենից առաջ՝ որևիցե բան անելը որևէ նպատակ է ենթադրում:

- Բայց չէ որ գոյության նպատակի հարցը փիլիսոփայության ամենաբարդ խնդիրն է, - ասեց ներկաներից մեկը: Դուք ցանկանում եք, որպեսզի մենք սկսենք այդ խնդրի լուծումից: Միգուցե մենք այստեղ ենք, քանի որ այս հարցի պատասխանն ենք փնտրում: Իսկ դուք ակնկալում եք, որ մենք պետք է դա նախօրոք իմանանք: Եթե մարդն իմանար դա, կնշանակեր՝ նա ամեն ինչ գիտի:

- Դուք սխալ ինձ հասկացաք, - ասեց Գ.-ն: Ես գոյության նպատակի փիլիսոփայական նշանակությունից չեմ խոսում: Մարդն այդ մասին ոչինչ չգիտի և չի էլ կարող իմանալ այնքան ժամանակ, որքան նա շարունակում է լինել այնպիսին, ինչպիսին, որ կա, առաջին հերթին, այն պատճառով, որ կա գոյության ոչ թե մեկ նպատակ, այլ մի քանի: Ընդհակառակը, այս հարցին հասարակ մեթոդներով պատասխանելու փորձերը ապարդյուն են: Ես ամբողջովին այլ բան էի հարցնում: Իմ հարցը վերաբերում էր ձեր *անձնական* նպատակին, թե *դուք* ինչ եք ցանկանում ձեռք բերել, այլ ոչ թե ձեր գոյության պատճառին: Յուրաքանչյուր մարդ պետք է ունենա իր նպատակը. մեկը հարստություն է ցանկանում, մյուսը՝ առողջություն, երրորդը՝ երկնային թագավորություն, չորրորդը ցանկանում է գեներալ դառնալ, և այլն: Նման նպատակների մասին եմ խոսում: Եթե ինձ հայտնեք, թե ինչ է ձեր նպատակը, ապա կկարողանամ պատասխանել ձեզ արդյոք մենք նույն ճանապարհով ենք ընթանում, թե ոչ:

Մտաբերեք, թե ինչպես եք ձևակերպել ձեր նպատակը՝ մինչ այստեղ գալը:

- Ես իմ նպատակը բավականին հստակ ձևով ձևակերպել եմ մի քանի տարի առաջ, - ասեցի ես: - Ինքս ինձ հայտարարեցի, որ ցանկանում եմ *իմանալ ապագան*: Տեսական ուսումնասիրությունների միջոցով ես եկա այն եզրակացության, որ *հնարավոր է* իմանալ ապագան. նույնիսկ մի քանի անգամ ինձ հաջողվել է փորձարկումների միջոցով հստակորեն գուշակել ապագան: Այս ամենից հետո ես

հանգեցի այն եզրակացության, որ մենք ունենք իրավունք և պետք է իմանանք ապագան. մինչև չիմանանք այն, չենք կարողանա կազմակերպել մեր կյանքը: Ինձ համար այս խնդրի հետ շատ բան է կապված: Ես կարծում եմ, որ օրինակ՝ մարդը կարող է և ունի իրավունք իմանալու, թե որքան ժամանակ է նրան մնացել ապրելու, որքան ժամանակ է նրան տրամադրված, այլ կերպ ասած՝ նա կարող է և ունի իրավունք իմանալու իր մահվան օրը և ժամը: Ինձ միշտ թվացել է, որ մարդու համար ստորացուցիչ է ապրել՝ չիմանալով այս ամենը. նույնիսկ մի պահ որոշեցի, որ որևէ բան չեմ սկսի անել, մինչև չիմանամ այդ մասին: Քանի որ ինչ իմաստ ունի որևէ գործ սկսել, եթե մարդը չգիտի կհաջողվի նրան ավարտին հասցնել այն, թե՞ ոչ:

- Շատ լավ, - ասեց Գ.-ն, - առաջին նպատակը կայանում է ապագան իմանալու մեջ: Էլ ո՞վ կարող է ձևակերպել իր նպատակը:

- Ես կցանկանայի համոզված լինել, որ ֆիզիկական մահից հետո կշարունակեմ գոյատևել. եթե դա իձնից է կախված, կցանկանայի աշխատել այն ուղղությամբ, որպեսզի մահից հետո կարողանամ ապրել, - ասեց ներկաներից մեկը:

- Եթե կարողանամ մնալ այնպիսին, ինչպիսին որ կամ, ապա ինձ համար կարևոր չէ կիմանամ ես ապագան, թե ոչ, կամ թե մահից հետո կյանք կա, թե ոչ: Ամենաշատը զգում եմ, որ ինքս իմ տերը չեմ: Եվ, եթե ձևակերպեի իմ նպատակը, ապա կասեի, որ ցանկանում եմ *ինքս իմ տերը լինել*:

- Ես կցանկանայի հասկանալ Քրիստոսի ուսմունքը և, բառիս բուն իմաստով, դառնալ Քրիստոնյա, - ասեց մյուսը:

- Ես կցանկանայի *օգնել մարդկանց*, - ասեց մեկ ուրիշը:

- Կցանկանայի իմանալ, թե ինչպես կարելի է դադարեցնել պատերազմները,

- ասեց հաջորդը:

- Լավ, բավական է, - ասեց Գ.-ն: Այժմ մենք ունենք բավարար նյութ քննարկելու համար: Հնչած ձևակերպումներից ամենալավն ինքն իր տերը դառնալու ձևակերպումն էր: Առանց սրա որևէ բան հնարավոր չէ և առանց սրա որևէ բան արժեք ունենալ չի կարող: Սակայն եկեք դիտարկենք առաջին հարցը կամ առաջին նպատակը:

Ապագան իմանալու համար անհրաժեշտ է առաջին հերթին իմանալ ներկան, ինչպես նաև անցյալը՝ բոլոր մանրամասնություններով: Այսօրվա օրն այսպիսին է, որովհետև երեկվանը այնպիսին էր, ինչպիսին որ կար: Եվ, եթե այսօրվա օրն այնպիսին է ինչպիսին երեկ էր, ապա վաղվա օրը կլինի այնպիսին, ինչպիսին այսօր է: Եթե ցանկանում եք, որ վաղվա օրը փոխվի, անհրաժեշտ կլինի այսօրվա օրը փոխել: Եթե այսօրվա օրը պարզապես երեկվա հետևանքն է, ապա վաղը նույնպես կլինի այսօրվա հետևանքը: Եվ եթե մարդը խորապես ուսումնասիրի, թե ինչ է եղել երեկ, երեկ չէ առաջին օրը, մի շաբաթ, մի տարի, տասը տարի առաջ, ապա հնարավոր է ճշգրիտ կերպով ասել, թե ինչ տեղի կունենա կամ տեղի չի ունենա վաղը: Սակայն ներկայումս մենք մեր տրամադրության տակ բավարար նյութ չունենք այս խնդիրը լրջորեն քննարկելու համար:

Այն, ինչ մեզ հետ տեղի է ունենում կամ կարող է տեղի ունենալ կախված է երեք պատճառներից՝ պատահականությունից, ճակատագրից կամ մեր սեփական կյանքից: Այնպիսին, ինչպիսին, որ մենք ենք, մենք գրեթե ամբողջովին կախված ենք պատահականությունից: Մենք, բառիս բուն իմաստով, որևէ ճակատագիր չենք կարող ունենալ, ինչպես չենք կարող ունենալ կամք: Եթե ունենայինք կամք, ապա միայն դրա ~~այդ~~ միջոցով կկարողանայինք իմանալ ապագան, քանի որ այդ դեպքում կկարողանայինք կառուցել մեր ապագան և կառուցել այնպես, ինչպես մենք ենք ցանկանում տեսնել այն: Եթե ունենայինք ճակատագիր, կկարողանայինք իմանալ ապագան, քանզի ճակատագիրը համապատասխանում է տեսակին: Եթե հայտնի է տեսակը, ապա հայտնի կարող է դառնալ նաև ճակատագիրը՝ ինչպես անցյալը, այնպես էլ ապագան: Սակայն հնարավոր չէ կանխատեսել պատահականությունները: Այսօր մարդը մի մարդ է, վաղը՝ մեկ ուրիշ. այսօր նրա՞ հետ մի բան է պատահում, վաղը՝ մեկ այլ բան:

- Սակայն արդյոք հնարավոր չէ կանխատեսել, թե ինչ է տեղի ունենալու մեզ~~ան~~ից յուրաքանչյուրի հետ, - հարցրեց ինչ-որ մեկը, - այսինքն՝ ինչպիսի արդյունքների կհասնի մեզնից յուրաքանչյուրն իր վրա աշխատելով, և արդյոք արժի սկսել այդ աշխատանքը:

- Հնարավոր չէ ասել, - պատասխանեց Գ.-ն: Հնարավոր է միայն կանխատեսել *մարդկանց* ապագան: Անհնար է գուշակել *խենթ մեքենաների* ապագան: Նրանց ուղղությունն ամեն բոլոր փոխվում է: Մի պահ այս մեքենաներից մեկը շարժվում է մեկ ուղղությամբ և դուք կարող եք հաշվարկել, թե այն ուր կհասնի, սակայն հինգ բոլոր անց, մեքենան մեկ այլ ուղղություն է վերցնում, և բոլոր քո հաշվարկները սխալ են դուրս գալիս: Հետևաբար ապագայի գուշակություններից խոսելիս, անհրաժեշտ է իմանալ, թե ում ապագայի մասին է գնում խոսքը: Եթե մարդը ցանկանում է իմանալ իր ապագան, նա առաջին հերթին պետք է ինքն իրեն ճանաչի: Այնուհետև նա ինքը կորոշի արդյոք արժի իմանալ ապագան, թե ոչ: Երբեմն գուցե ավելի լավ է չիմանալ:

Սա կարող է պարադոքսային հնչել, սակայն մենք ունենք բոլոր իրավունքներն ասելու, որ գիտենք մեր ապագան: Այն կլինի իսկնիսկ այնպիսին, ինչպիսին մեր անցյալն էր: Ոչինչ ինքնաբերաբար չի փոխվում:

Գործնականում ապագան ուսումնասիրելու համար անհրաժեշտ է սովորել նկատել և մտապահել այն պահերը, որի ժամանակ մենք իսկապես գիտենք ապագան և գործում ենք այդ գիտելիքներին համաձայն: Այնուհետև արդյունքներից դատելով՝ հնարավոր կդառնա ապացուցել, որ մենք իսկապես գիտենք ապագան: Դա պարզ ձևով դրսևորվում է օրինակ՝ գործարարության մեջ: Ցանկացած հմուտ գործարար առևտրական գիտի ապագան: Եթե նա չիմանա ապագան, ապա իր գործը կձախողվի: Մարդն իր վրա աշխատելիս՝ պետք է լավ գործարար լինի, լավ առևտրական: Իսկ ապագայի իմացությունը արդյունավետ է միայն այն ժամանակ, երբ մարդը կարող է իր տերը լինել:

Այստեղ մի հարց հնչեց կապված ետմահու կյանքի հետ, թե ինչպես կարելի է ստեղծել այն և խուսափել վերջնական մահից՝ ինչպես չմահանալ:

Դրա համար անհրաժեշտ է «լինել»: Եթե մարդը փոփոխվում է ամեն րոպե, եթե նրանում որևէ բան չկա, որ կարողանա դիմակայել արտաքին ազդեցություններին, դա կնշանակի, որ նրանում չկա որևէ բան, որ կկարողանա դիմակայել մահին: Մակայն, եթե նա անկախ է դառնում արտաքին ազդեցություններից, եթե նրանում ստեղծվում է մի բան, որը կարող է *ինքնուրույն* գոյատևել, հնարավոր է, որ այն չմահանա: Հասարակ իրավիճակներում մենք ամեն րոպե մահանում ենք: Արտաքին ազդեցությունները փոխվում են, նրանց հետ փոխվում ենք նաև մենք, այսինքն՝ մեր Ես-երից շատերը մահանում են: Եթե մարդն իր ներսում մշտական Ես է ձևավորում, որը կարող է հաղթահարել արտաքին ազդեցությունները, ապա այն կկարողանա հաղթահարել նաև ֆիզիկական մարմնի մահը: Ողջ գաղտնիքը կայանում է նրանում, որ մարդը չի կարող աշխատել ապագա կյանքի ուղղությամբ՝ առանց ներկայիս կյանքի վրա աշխատելու: Կյանքի համար աշխատելով՝ մարդն աշխատում է մահվան համար, կամ ավելի շուտ՝ անմահության: Հետևաբար՝ անմահության ուղղությամբ տարված աշխատանքը, եթե այն կարելի է այսպես կոչել, չի կարելի տարանջատել ընդհանուր աշխատանքից: Ձեռք բերելով մեկը՝ մարդը ձեռք է բերում նաև մյուսը: Մարդը կարող է ձգտել *լինել*՝ պարզապես իր սեփական կենսական շահերից ելնելով: Միայն այսպես է հնարավոր հասնել անմահության: Մենք ետմահու կյանքի մասին առանձին չենք խոսում և չենք ուսումնասիրում արդյոք այն գոյություն ունի, թե ոչ, քանի որ օրենքները նույնն են ամենուր: Ուսումնասիրելով իր սեփական կյանքը՝ ինչպիսին որ նա գիտի այն, ուսումնասիրելով այլ մարդկանց կյանքը՝ ծնունդից մինչ մահ, մարդն ուսումնասիրում է այն օրենքները, որոնք կառավարում են կյանքը, մահը և անմահությունը: Եթե նա դառնա իր կյանքի տերը, հնարավոր է, որ նա դառնա նաև իր մահվան տերը:

Հարց հնչեց նաև այն մասին, թե *ինչպես դառնալ քրիստոնյա* :

Առաջին հերթին՝ անհրաժեշտ է հասկանալ քրիստոնյան այն մարդը չէ, ով իրեն համարում է քրիստոնյա կամ ում մյուսներն են կոչում քրիստոնյա: Քրիստոնյան այն մարդն է, ով ապրում է Քրիստոսի պատվիրաններին համաձայն: Այնպիսին, ինչպիսին, որ մենք ենք, մենք չենք կարող քրիստոնյա լինել: Քրիստոնյա լինելու համար մենք պետք է կարողանանք «անել»: Մենք չենք կարողանում անել. մեզ հետ ամեն բան «պատահում է»: Քրիստոսն ասում է. «Մի՞թի թշնամուդ», սակայն ինչպես կարող ենք սիրել մեր թշնամուն, եթե նույնիսկ մեր ընկերոջը չենք կարող սիրել: Երբեմն մեր մի մասը նրան «սիրում է», «երբեմն չի սիրում»: Այնպիսին, ինչպիսին որ մենք ենք, մենք նույնիսկ չենք կարող ցանկանալ իրականում քրիստոնյա լինել, որովհետև երբեմն ինչ-որ մեր մի մասը «այն ցանկանում է», իսկ երբեմն էլ «չի ցանկանում»: Եվ հնարավոր չէ միևնույն բանը երկար ժամանակ ցանկանալ, որովհետև հանկարծ, քրիստոնյա լինելու ցանկության փոխարեն՝ մարդը հիշում է խանութում տեսած շատ լավ, բայց թանկարժեք գորգի մասին: Եվ քրիստոնյա լինելու ցանկության փոխարեն, նա սկսում է մտածել, թե ինչպես գնել այդ գորգը՝ մոռանալով ամեն բան Քրիստոնեության մասին: Կամ, եթե որևէ մեկը չի հավատում նրա հիասքանչ քրիստոնյա լինելուն, նա պատրաստ է այդ մարդուն հում-հում ուտել կամ

թեժ ածխի վրա խորովել: Լավ քրիստոնյա լինելու համար անհրաժեշտ է *լինել*: Լինել նշանակում է ինքդ քո տերը լինել: Եթե մարդն իր տերը չէ, նա որևէ բան չունի և չի էլ կարող ունենալ: Քրիստոնյա էլ չի կարող լինել: Նա պարզապես մեքենա է, ավտոմատ: Մեքենան քրիստոնյա չի կարող լինել: Ինքների դատեք, հնարավոր ր է արդյոք, որ ավտոմեքենան, գրամեքենան կամ գրամոֆոնը քրիստոնյա լինի: Դրանք պարզապես առարկաներ են, որոնց վերահսկում է պատահականությունը: Նրանք պատասխանատու չեն: Նրանք մեքենաներ են: Քրիստոնյա լինել նշանակում է լինել պատասխանատու: Պատասխանատվությունն ավելի ուշ է գալիս, երբ մարդը գոնե մասամբ դադարում է մեքենա լինելուց և ցանկանում է քրիստոնյա լինել ոչ միայն խոսքով, այլ նաև փաստացի:

- Ինչպիսի՞ հարաբերության մեջ է գտնվում ձեր կողմից շարադվող ուսմունքը մեզ հայտնի քրիստոնեության հետ, - հարցրեց ներկաներից մեկը:

- Ես չգիտեմ, թե դուք ինչ գիտեք *քրիստոնեության* մասին, - ասեց Գ.-ն՝ շեշտելով այս բառը: - Անհրաժեշտ կլիներ շատ և երկար խոսել ձեզ հետ՝ պարզելու համար, թե այս տերմինն ասելով ինչ էք հասկանում: Սակայն հանուն նրանց, ովքեր արդեն գիտեն, ես կասեմ, որ դա *էզոթերիկ Քրիստոնեությունն է*: Մենք իր ժամանակին կխոսենք այս տերմինների նշանակության մասին: Իսկ այժմ կշարունակենք քննարկել մեր հարցերը:

Մարդու հայտնած ցանկություններից ամենճշգրիտը *ինք իր տերը* լինելու ցանկությունն է, քանի որ առանց դրա որևէ այլ բան հնարավոր չէ: Եվ այս ցանկության համեմատ մնացած բոլոր երազանքները մանկական երազանքներ են, ցանկություններ, որոնցից մարդիկ չեն կարող օգտվել նույնիսկ այն դեպքում, եթե դրանք իրականանան:

Ինչ-որ մեկն, օրինակ, ասեց, որ ցանկանում է մարդկանց օգնել: *Մարդկանց օգնելու համար* առաջին հերթին անհրաժեշտ է սովորել ինքդ քեզ օգնել: Շատերը ընկղմվում են ուրիշներին օգնելու մտածմունքի և զգացմունքների մեջ պարզապես ծուլության պատճառով: Նրանք ծուլանում են իրենց վրա աշխատել, սակայն միևնույն ժամանակ նրանց համար հաճելի է մտածել, որ իրենք կարողանում են օգնել ուրիշներին: Սա ինքնախաբեություն է և կեղծիք: Եթե մարդն ինքն իր վրա նայի, ապա չի սկսի մտածել ուրիշներին օգնելու մասին. նա կամաչի այդ մտքից: Մարդկության հանդեպ սերը, մարդասիրությունը, շատ գեղեցիկ բառեր են, սակայն դրանք նշանակություն են ստանում միայն այն դեպքում, եթե մարդն իր ընտրությամբ և որոշմամբ է կարողանում սիրել կամ չսիրել, լինել մարդասեր կամ եսասեր: Այդ դեպքում նրա ընտրությունը արժեքավորված է: Սակայն, եթե չկա որևէ ընտրություն, եթե նա չի կարող փոխվել, եթե նա այդպիսին է միայն պատահականության պատճառով՝ այսօր մարդասեր,

վաղը՝ եսասեր, վաղը չէ մյուս օրը՝ կրկին մարդասեր, ապա այդ ամենը որևէ արժեք չունի: Ուրիշներին օգնելու համար մարդն առաջին հերթին պետք է սովորի եսասեր լինել՝ գիտակից եսասեր: Միայն գիտակից եսասերը կարող է օգնել մարդկանց: Այնպիսին, ինչպիսին մենք ենք, մենք ոչինչ չենք կարող անել: Մարդը

որոշում է լինել եսասեր, սակայն փոխարենն իր վերջին շապիկը որոշում է տալ ուրիշին: Նա որոշում է իր վերջին շապիկը տալ ուրիշին, բայց փոխարենը նա վերջին շապիկը խլում է այն մարդուց, ում մտադրված էր տալու իր սեփական շապիկը: Կամ որոշում է իր սեփական շապիկը տալ ուրիշին, բայց փոխարենը մեկ ուրիշի շապիկն է տալիս և վիրավորվում է, եթե որևէ մեկը մերժում է իր շապիկը տալ իրեն, որպեսզի ինքն էլ տա այն ուրիշին: Ահա սա է հաճախակի տեղի է ունենում: Եվ այսպես շարունակ:

Եվ ամենից առաջ, որպեսզի մարդը կարողանա անել այն, ինչ բարդ է, նա պետք է սովորի այն, ինչ հեշտ է: Նա չպետք է սկսի ամենաբարդից:

Հարց տրվեց նաև *պատերազմի* մասին: *Ի՞նչպես կասեցնել պատերազմները:* Պատերազմները հնարավոր չէ կասեցնել: Պատերազմները ստրկության հետևանքն են, որում ապրում են մարդիկ: Մարդկանց պետք չէ մեղադրել պատերազմների համար: Պատերազմները տիեզերական ուժերի, մոլորակային ազդեցությունների արդյունք են: Սակայն մարդիկ չունեն նման ազդեցություններին դիմակայելու ունակություն և չեն էլ կարող ունենալ, քանի որ նրանք ստրուկներ են: Եթե նրանք *մարդ* լինեին և ունենային որևէ բան «անելու» կարողություն, ապա կկարողանային դիմակայել այս ազդեցություններին և կիրաժարվեին իրար սպանելուց:

- Բայց չէ՞ որ նրանք, ովքեր գիտակցում են այս ամենը կարող են ինչ-որ մի բան անել, - ասեց այն մարդը, որ տվել էր այս հարցը: - Եթե բավարար քանակությամբ մարդիկ գային վճռական եզրակացության, որ պատերազմ չպետք է լինի, չէին կարողանա արդյո՞ք ազդել մյուսների վրա:

- Նրանք, ովքեր չեն սիրում պատերազմներ, փորձել են անել դա աշխարհի արարման ժամանակներից ի վեր, - ասեց Գ.-ն: Մինչդեռ այժմյան պատերազմի պես պատերազմ երբևիցե չի եղել: Պատերազմների ծավալը չի փոքրանում, այլ մեծանում է. պատերազմը հնարավոր չէ սովորական միջոցներով կասեցնել: Համընդհանուր խախաղության մասին բոլոր այս տեսությունները, համագումարները և այլն կրկին ծուլության և կեղծավորության արդյունք են: Մարդիկ չեն ցանկանում իրենց մասին մտածել, չեն ցանկանում ինքներն իրենց վրա աշխատել, այլ մտածում են, թե ինչպես կարելի է ստիպել այլ մարդկանց անել այն, ինչ նրանք են ցանկանում: Եթե բավարար քանակությամբ մարդիկ, ովքեր ցանկանում են կասեցնել պատերազմը, իրականում համախմբվեին, ապա առաջին հերթին՝ պատերազմ կհայտարարեին այն մարդկանց, ովքեր իրենց հետ համաձայն չեն: Եվ ավելի հավանական է, որ պատերազմին այն մարդկանց դեմ, ովքեր նույնպես ցանկանում են կասեցնել պատերազմները, սակայն այլ միջոցների դիմելով: Այսպիսով, նրանք կկոմեին: Մարդիկ այնպիսին են, ինչպիսին որ կան և նրանք այլ կերպ չեն կարող լինել: Պատերազմներն ունեն մեզ անհայտ բազմաթիվ պատճառներ: Որոշ պատճառներ բխում են հենց մարդկանցից, մյուսները՝ նրանցից կախված չեն: Անհրաժեշտ է սկսել այն պատճառներից, որոնք բխում են մարդուց: Ինչպե՞ս կարող է մարդն անկախ լինել հզոր տիեզերական արտաքին ազդեցություններից, եթե նա ստրուկ է այն ամենի ինչ շրջապատում է իրեն: Մարդուն շրջապատող երևույթները ղեկավարում է իրեն: Եթե նա ձերբազատվի

այդ ազդեցություններից, ապա կկարողանա ձերբազատվել նաև մոլորակային ազդեցություններից:

Ազատություն, ազատագրում, սա պետք է լինի մարդու նպատակը: Ազատվել և ազատագրվել ստրկությունից. սրան պիտի ձգտի մարդը այն պահից, երբ նույնիսկ մի փոքր գիտակցում է իր կարգավիճակը: Նրա համար որևէ բան գոյություն չունի և որևէ բան հնարավոր չէ քանի դեռ նա մնում է ստրուկ՝ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին կյանքում: Մակայն արտաքին կյանքում նա չի կարող դադարել ստրուկ լինելուց, մինչև ներքուստ չդադարի ստրուկ լինելուց:

Մարդու ներքին ստրկության առաջնային պատճառը նրա սոցիալությունն է, և ամենից առաջ՝ իր անձի չիմացությունն: Առանց ինքնաճանաչողության, չհասկանալով սեփական մեքենայի աշխատանքը և գործառույթները, մարդը չի կարող ազատ լինել, նա չի կարող ինքն իրեն կառավարել. հետևաբար միշտ կմնա ստրուկ և խաղալիք իր վրա ազդող ուժերի համար:

Այ թե ինչու բոլոր հնագույն ուսմունքները ազատագրման ճանապարհի հիմքում դնում են հետևյալ պահանջը. «Ճանաչիր ինքդ քեզ»:

Մենք այժմ կքննարկենք այս գաղափարը:

Հաջորդ դասախոսությունը սկսվեց հենց այս գաղափարից. «Ճանաչիր ինքդ քեզ»:

- Այս միտքը, - ասեց Գ.-ն, - որը սովորաբար վերագրվում է Սոկրատեսին, իրականում ընկած է Սոկրատեսի դպրոցից շատ ավելի հնագույն համակարգերի և դպրոցների հիմքում: Եվ չնայած արդիական մտքին հայտնի է այս սկզբունքի գոյությունը, դրա նշանակության մասին նրա պատկերացումները շատ աղոտ են: Մեր ժամանակներում սովորական մարդը՝ նույնիսկ փիլիսոփայական և գիտական հետաքրքրություններ ունեցող մարդը, չի գիտակցում, որ «Ճանաչիր ինքդ քեզ» սկզբունքը խոսում է սեփական մեքենայի՝ «մարդկային մեքենայի» ճանաչողության մասին: Մեքենաները, քիչ, թե շատ, նույնկերպ են կառուցված, հետևաբար մարդը պետք է ուսումնասիրի իր օրգանիզմի կառուցվածքը, գործառույթները և օրենքները: Մարդկային մեքենայում ամեն բան այնքան փոխկապակցված է և մեկը մյուսից կախված, որ գրեթե անհնարին է ուսումնասիրել մեկ գործառույթ՝ չուսումնասիրելով մյուսները: Որևէ բանի մասին իմանաու համար անհրաժեշտ է ամեն ինչ իմանալ: Հնարավոր է մարդու մասին *ամեն ինչ իմանալ*, սակայն դրա համար կպահանջվի բավականին երկար ժամանակ և աշխատանք, ամենից առաջ՝ ճիշտ մեթոդի կիրառում, ինչպես նաև ճիշտ առաջնորդություն, որի կարևորությունը հավասարազոր է մյուսներին:

«Ճանաչիր ինքդ քեզ» սկզբունքը շատ հարուստ բովանդակություն ունի: Այն պահանջում է այն մարդուց, որ ցանկանում է ճանաչել ինքն իրեն, առաջին հերթին, հասկանալ այդ սկզբունքի նշանակությունը, հասկանալ, թե ինչի հետ է այն կապված և ինչից է կախված:

Ինքնաճանաչումը շատ մեծ, բայց նաև շատ մշուշոտ և հեռավոր նպատակ է: Մարդն իր ներկա վիճակում շատ հեռու է գտնվում ինքնաճանաչումից: Այդ իսկ

պատճառով, նրա նպատակը նույնիսկ չի կարելի սահմանել որպես ինքնճանաչում: Ինքնճանաչումը պետք է լինի նրա առաջնային նպատակը: Բավական է այն, եթե մարդը հասկանում է, որ պետք է ուսումնասիրի իրեն: Մարդը պետք է իրեն ուսումնասիրելու նպատակ հետապնդի, *ճանաչի ինքն իրեն*՝ ընտրելով ճշմարիտ ուղին:

Մեփական անձի ուսումնասիրությունը այն աշխատանքն է կամ ուղին, որը տանում է դեպի ինքնճանաչում: Մակայն սեփական անձի ուսումնասիրության համար անհրաժեշտ է նախ սովորել, թե *ինչպես ուսումնասիրել*, որտեղից սկսել, ինչպիսի մեթոդներ կիրառել: Մարդը պետք է սովորի ուսումնասիրել սեփական անձը և սեփական անձի ուսումնասիրության մեթոդները:

Մեփական անձի ուսումնասիրության գիտվոր մեթոդը ինքնադիտարկումն է: Առանց պատշաճ ինքնադիտարկման մարդը երբևիցե չի հասկանա մարդկային մեքենայի բազմազան ֆունկցիաների միջև եղած կապը և հարաբերակցությունը. նա երբևիցե չի հասկանա, թե ինչպես և ինչու ամեն անգամ նրա հետ ամեն ինչ «պատահում է»: Այսպիսով, մարդկային մեքենայի ֆունկցիաները դիտարկելիս անհրաժեշտ է հասկանալ դիտարկվող գործառույթների ճշգրիտ տարանջատումը և կարողանալ ճշգրտորեն և անմիջապես սահմանել դրանք, իսկ սահմանումը չպետք է լինի խոսքային, այլ ներքին՝ արտահայտված համի, զգացումների միջոցով, այնպես, ինչպես մենք կսահմանեինք բոլոր մեր ներքին ապրումները:

Գոյություն ունի իքնադիտարկման երկու մեթոդ՝ *վերլուծություն*, կամ վերլուծելու փորձեր, այսինքն՝ հարցերի պատասխանները գտնելու փորձեր. ինչից է կախված տվյալ երևույթը, ինչու է այն տեղի ունենում: Երկրորդ մեթոդը պահանջում է պարզապես սեփական ուղեղում արձանագրել կամ *«գրանցել»* այն ինչ դիտարկվում է տվյալ պահին:

Ինքնադիտարկումը, հատկապես սկզբնական շրջանում, չպետք է ոչ մի դեպքում դառնա վերլուծություն կամ վերլուծության փորձեր: Վերլուծությունը հնարավոր կդառանա շատ ավելի ուշ, երբ մարդը կճանաչի իր մեքենայի բոլոր գործառույթները և դրանց ղեկավարող բոլոր օրենքները:

Փորձելով վերլուծել իր ներսում հայտնաբերած որևէ երևույթ՝ մարդը սովորաբար հարցնում է. «ի՞նչ է սա, ինչու՞ է այն տեղի ունենում այսպես, այլ ոչ թե այլ կերպ»: Եվ նա սկսում է այդ հարցերի պատասխանը փնտրել՝ մոռանալով հետագա դիտարկումների մասին: Ավելի ու ավելի ընկղմվելով այս հարցերի մեջ՝ նա ամբողջովին կորցնում է ինքնադիտարկման թելը և նույնիսկ մոռանում է այդ մասին: Արդյունքում ինքնադիտարկումը դադարում է: Սրանից հետևում է, որ միայն մեկը կարող է շարունակվել՝ կամ ինքնադիտարկումը կամ վերլուծության փորձերը:

Մակայն այս ամենից զատ, առանձին երևույթների ուսումնասիրության փորձերը, առանց օրենքների մասին ընդհանուր գիտելիքների, պարզապես ժամանակի կորուստ է: Նույնիսկ ամենատարրական երևույթների ուսումնասիրությունը հնարավոր դարձնելու համար մարդը «արձանագրման» միջոցով բավարար քանակությամբ նյութ պետք է հավաքագրի: «Արձանագրումը»՝

այսինքն տվյալ պահին տեղի ունեցող իրադարձությունների ուղղակի դիտարկումների արդյունքը, ամենակարևոր նյութն է ինքնադիտարկման գործում: Երբ հավաքագրվում է որոշակի քանակությամբ «արձանագրություն» և միննույն ժամանակ ուսումնասիրվում են օրենքները, հնարավոր է դառնում նաև վերլուծությունը:

Ի սկզբանե, դիտարկումը կամ «արձանագրումը» պետք է հիմնված լինի մարդկային մեքենայի գործունեության հիմնարար սկզբունքների ընկալման վրա: Առանց այս սկզբունքների իմացության և կիրառման ինքնադիտարկումը հնարավոր չի լինի իրականացնել: Հետևաբար, սովորական ինքնադիտարկումը, որը կատարում են բոլոր մարդիկ իրենց ողջ կյանքի ընթացքում, կլինի անօգուտ և որևէ արդյունքի չի բերի:

Դիտարկումը պետք է սկսվի գործառույթների տարանջատումից: Մարդկային մեքենայի ողջ գործունեությունը բաժանվում է չորս հստակորեն սահմանված խմբերի, որոնցից յուրաքանչյուրը գտնվում է առանձին բանականության կամ «կենտրոնի» վերահսկողության տակ: Սեփական անձը դիտարկելիս մարդը պետք է դիտարկի իր մեքենայի չորս առանձին գործառույթները՝ մտավոր, զգայական, շարժիչ և բնագոյային: Իր ներսում մարդու կողմից դիտարկվող յուրաքանչյուր երևույթ, այս կամ այն կերպով, կապված է այս գործառույթների հետ: Այդ պատճառով էլ մինչև մարդը կսկսի ինքնադիտարկումը նա պետք է հասկանա, թե ինչպիսի տարբերություններ կան այս գործառույթների միջև, թե ինչ են իրենցից ներկայացնում մտավոր, զգայական, շարժիչ և բնագոյային գործունեությունները:

Դիտարկումը պետք է սկսել ամենասկզբից: Նախկինում վերապրած բոլոր ապրումները, նախկինում կայացրած բոլոր ինքնադիտարկումները անհրաժեշտ է մի կողմ դնել: Հնարավոր է՝ նրանք արժեքավոր նյութ պարունակեն: Սակայն ողջ այս նյութը դիտարկվող գործառույթների սխալ տարանջատման վրա է հիմնված, հետևաբար՝ այն նույնպես սխալ կերպով է տարանջատված: Այդ պատճառով էլ չի կարելի ոչ մի դեպքում օգտագործել այն, համենայն դեպս ոչ սեփական անձի ուսումնասիրության աշխատանքների սկզբնական փուլում: Դրանում պարունակվող արժեքավոր մասը ճիշտ ժամանակին կվերցվի և կուսումնասիրվի: Սակայն անհրաժեշտ է ամեն ինչ սկսել սկզբից: Մարդը պետք է իր սեփական անձի ուսումնասիրությունը սկսկի այնպես, ասես, նա բացարձակապես չի ճանաչում ինքն իրեն, կարծես նա երբևիցե չի դիտարկել ինքն իրեն:

Սկսելով ուսումնասիրել ինքն իրեն՝ նա անմիջապես պետք է որոշի, թե որ խմբին, որ կենտրոնին են պատկանում տվյալ պահին նրա կողմից դիտարկվող երևույթները:

Որոշ մարդկանց համար բարդ է հասկանալ մտքի և զգացմունքի տարբերությունը, մյուսների համար դժվար է տարանջատել զգացմունքը զգացողությունից, միտքը՝ ներքին շարժող ուժից:

Ընդհանուր առմամբ խոսելիս կարելի է ասել, որ մտավոր գործառույթը միշտ գործում է համեմատության միջոցով: Մտավոր եզրակացությունները միշտ երկու կամ ավելի տպավորությունների արդյունք են:

Զգացողությունը և զգացմունքը չեն մտորում, չեն համեմատում. նրանք պարզապես սահմանում են տվյալ տպավորությունը՝ ըստ դրա որակի, գույնի, համի կամ հոտի, թե արդյոք այս կամ այն տեսակյունից այն հաճելի է, թե տհաճ: Դեռ ավելին, զգացողությունները կարող են չեզոք լինել՝ ոչ տաք, ոչ սառը, ոչ հաճելի, ոչ տհաճ, օրինակ՝ «սպիտակ թուղթ», «կարմիր գրիչ»: Սպիտակի կամ կարմիրի ընկալման մեջ չկա որևէ հաճելի, կամ տհաճ բան: Ամեն դեպքերում, պարտադիր չէ, որ այս կամ այն գույնը լինի հաճելի կամ տհաճ: Այս զգացողությունները, այսպես կոչված՝ «հինգ զգայարանները» և մյուսները, ինչպիսիք են՝ տաքի, սառի և այլնի ընկալումը բնագդային են: Զգացմունքային գործառույթները կամ զգացմունքները միշտ կամ հաճելի են, կամ տհաճ. անտարբեր զգացմունքներ գոյություն չունեն:

Գործառույթների տարբերակման բարդությունն աճում է, քանի որ մարդիկ տարբերվում են միմյանցից ըստ իրենց գործառույթների զգայական ընկալման: Մա է, որ մենք սովորաբար չենք հասկանում: Մենք շատ ավելի հաճախ ենք մարդկանց իրար նմանեցնում, քան նրանք իրականում նման են: Իրականում նրանց միջև կան հսկայական տարբերություններ՝ նրանց ընկալման ձևերի և մեթոդների տեսանկյունից: Ոմանք հիմնականում ընկալում են իրենց բանականության, մյուսներն իրենց զգացմունքներն, ոմանք էլ իրենց զգացողությունների միջոցով: Բավականին բարդ է, կամ գրեթե անհնար, տարբեր կատեգորիաների կամ ընկալման տարբեր ձևեր ունեցող մարդկանց համար միմյանց հասկանալը, քանի որ նրանք միևնույն բանը տարբեր անուններով են կոչում և տարբեր բաները միևնույն անունով: Բացի դրանից, մի շարք այլ համադրումներ են հնարավոր: Մեկը ընկալում է մտքի և զգացողության միջոցով, մյուսը՝ մտքի և զգացմունքների, և այլն: Ընկալման այս կամ այն ձևը ուղղակիորեն կապված է այն բանի հետ, թե տվյալ մարդու մոտ ինչ արձագանք է գտնում այս կամ այն իրադարձությունը: Մարդկանց տարբեր ընկալումների և արտաքին իրադարձությունների հանդեպ դրսևորված այս կամ այն արձագանքը հանգեցնում է նրան, որ առաջին հերթին՝ մարդիկ սկսում են չհասկանալ միմյանց, իսկ երկրորդը՝ մարդիկ իրենք իրենց չեն հասկանում: Շատ հաճախ մարդն իր մտքերը կամ մտավոր ընկալումները կոչում է զգացմունքներ, իր զգացմունքները՝ մտքեր, իսկ իր զգացողությունները՝ զգացմունքներ: Այս վերջինն ամենատարածվածն է: Եթե երկու մարդ միևնույն երևույթը տարբեր ձևերով են ընկալում, օրինակ՝ նրանցից մեկն ընկալում է այն իր զգացմունքների միջոցով, իսկ մյուսը՝ զգացողության, ապա նրանք կարող են իրենց ողջ կյանքում վիճաբանել և երբևիցե չհասկանալ, թե որն է նրանց մոտեցումների տարբերությունը տվյալ առարկայի հանդեպ: Իրականում նրանցից մեկը տվյալ առարկայի մի կողմն է տեսնում, իսկ մյուսը՝ մեկ այլ կողմը:

Տարբերակիչ հատկանիշը գտնելու համար անհրաժեշտ է հասկանալ, որ յուրաքանչյուր հոգեկան գործառույթ գիտելիք ձեռքբերելու միջոց է կամ գործիք:

Բանականության միջոցով մենք տեսնում ենք իրերի և իրադարձությունների մի կողմը, զգացմունքների միջոցով՝ մյուս կողմը, զգացողությունների միջոցով՝ երրորդ կողմը: Տվյալ առարկայի՝ մասին ամենամաքողական գիտելիքը մենք կարող ենք ձեռք բերել՝ այն ուսումնասիրելով մեր բանականության, զգացմունքների և զգացողությունների միջոցով: Ճշգրիտ գիտելիքներին ձգտող յուրաքանչյուր մարդ պետք է նպատակ դնի ձեռք բերելու նման ընկալունակություն: Սովորական պայմաններում մարդն աշխարհին ծուռ և անհարթ պատուհանի ապակու միջով է նայում: Եթե նույնիսկ նա գիտակցում է դա, ապա ոչինչ չի կարող ~~է~~ փոխել: Ընկալման այս կամ այն ձևը կախված է նրա օրգանիզմի ընդհանուր աշխատանքից: Բոլոր գործառույթները փոխկապակցված են և հավասարակշռության մեջ են դնում մեկը մյուսին, բոլոր գործառույթները փորձում են պահել միմյանց այն վիճակում, որում նրանք գտնվում են: Այդ պատճառով էլ, երբ մարդը սկսում է ուսումնասիրել սեփական անձը, նա պետք է հասկանա, որ եթե իր մեջ բացահայտում է իրեն դուր չեկող որևէ գիծ, նա չի կարողանալու փոխել այն: Ուսումնասիրությունը մի բան է, իսկ փոխելը՝ մեկ այլ բան: Մակայն ուսումնասիրությունը հետագայում հնարավոր փոփոխության հավանականությանն ուղված առաջին քայլն է: Իսկ ամենասկզբում, սեփական անձն ուսումնասիրելու համար անհրաժեշտ է հասկանալ, որ իր աշխատանքը դեռ երկար ժամանակ կայանալու է հենց սեփական անձի ուսումնասիրությունը:

Սովորական պայմաններում փոփոխությունը հնարավոր չէ, քանի որ ցանկանալով որևէ բան փոխել, մարդը ցանկանում է փոխել իր սեփական անձի միայն հենց այդ կողմը: Մակայն մեքենայի մեջ ամեն ինչ փոխկապակցված է, և յուրաքանչյուր գործառույթ հավասարակշռության է հասնում մեկ կամ մի շարք այլ գործառույթների շնորհիվ, թեև մենք ինքներս իրազեկ չենք մեր ներսում առկա բազմաթիվ գործառույթների փոխկապակցվածությանը: Գործունեության ցանկացած պահին մեքենայի բոլոր մասնիկները հավասարակշռության մեջ են գտնվում: Եթե մարդն իր մեջ նկատում է մի բան, որ նրան դուր չի գալիս և սկսում է այն փոխելու ուղղությամբ ջանքեր գործադրել, ապա նա կարող է որոշակի արդյունքի հասնել: Մակայն այդ արդյունքի հետ մեկտեղ նա ձեռք կբերի նաև այլ անսպասելի և անցանկալի արդյունք, որի մասին նա նույնիսկ չէր կասկածում: Փորձելով ոչնչացնել և վերացնել այն ամենն, ինչ իրեն դուր չի գալիս և գործադրելով ջանքեր այդ ամենին վերջ դնելու ուղղությամբ՝ նա խախտում է մեքենայի հավասարակշռությունը: Մեքենան ձգտում է վերականգնել իր հավասարակշռությունը և դա անում է՝ ստեղծելով մարդու կողմից չնախատեսված նոր գործառույթ: Օրինակ, մարդը կարող է դիտարկել, որ ինքը շատ ցրված է, որ ամեն ինչ մոռանում է, ամեն ինչ կորցնում է և այլն: Նա սկսում է այդ սովորության դեմ պայքարել և եթե բավականին սիստեմատիկ է և վճռական, ապա հասնում է հաջողության՝ ժամանակի ընթացքում ձեռք բերելով ցանկալի արդյունքներ. նա այլևս չի մոռանում և չի կորցնում իրերը: Այս փոփոխությունը նկատելի է իր համար, սակայն նկատելի չէ մեկ այլ բան, որը սակայն նկատելի է մյուսների համար՝ այն, որ նա դարձել է դյուրագրգիռ, մանրախնդիր,

տհաճ և ամեն ինչում սխալ փնտրող մարդ: Դյուրագրգռվածությունն առաջացել է ցրվածության բացակայության արդյունքում: Ինչու: Հնարավոր չէ ասել: Միայն տվյալ մարդու մտավոր առանձնահատկությունների մանրակրկիտ վերլուծությունը կարող է ցույց տալ, թե ինչու է մեկ առանձնահատկության կորուստը տեղ տալիս մեկ այլ առանձնահատկության: Սա չի նշանակում, որ ցրվածության կորուստը պարտադիր կերպով պետք է հանգեցնի դյուրագրգռվածության: Շատ հեշտությամբ մարդը կարող է այլ առանձնահատկություններ ձեռք բերել, որոնք որևէ կապ չունեն մոռացկոտության հետ, օրինակ՝ զծուծություն, նախանձ կամ մեկ այլ բան:

Այսպիսով, եթե մարդը որոշել է աշխատել իր վրա պատշաճ կերպով, նա պետք է նկատի ունենա և նախօրոք հաշվի առնի հնարավոր լրացուցիչ փոփոխությունները: Միայն այսկերպ կարելի է խուսափել անցանկալի փոփոխություններից կամ առանձնահատկություններից, որոնք խիստ հակասում են նպատակային և աշխատանքային ուղղվածությանը:

Սակայն աշխատանքի ընդհանուր ծրագրում և գործառույթներում գոյություն ունեն որոշակի կետեր, որոնցում կարելի է փոփոխություններ իրականացնել՝ առանց որևիցե լրացուցիչ արդյունքների առաջացման: Անհրաժեշտ է իմանալ, թե որոնք են այդ կետերը, անհրաժեշտ է նաև իմանալ, թե ինչպես մոտենալ դրանց, քանի որ, եթե մենք չսկսենք *նրանցից*, ապա որևէ արդյունքների չենք հասնի կամ հասնելու դեպքում՝ դրանք կլինեն սխալ և անցանկալի:

Իր մտքում սահմանելով մտավոր, զգացմունքային և շարժիչ գործառույթները՝ մարդը, սեփական անձն ուսումնասիրելիս, պետք է անմիջապես դասի իր տպավորությունները այս կամ այն կատեգորիային: Սկզբում նա պետք է մտավոր կերպով գրանցի այն դիտարկումները, որոնցում նա կասկած չունի, այսինքն՝ այն դիտարկումները, որոնք նա կարող է անմիջապես դասել այս կամ այն կատեգորիային: Նա պետք է հրաժարվի բոլոր անորոշ և կասկածելի դեպքերից և հիշի միայն նրանք, որոնք անտարակուսելի են: Եթե աշխատանքը ճիշտ տարվի, ապա անտարակուսելի դիտարկումներն արագ կերպով կշատանան: Եվ այն, ինչ կասկածի տեղիք էր տալիս նախկինում, այժմ պարզ կերպով կկարողանա դասվել առաջին, երկրորդ կամ երրորդ կենտրոնին: Յուրաքանչյուր կենտրոն ունի իր առանձին հիշողությունը, գուգորդությունը, մտածելակերպը: Իրականում յուրաքանչյուր կենտրոն բաղկացած է երեք մասերից՝ մտավոր, զգացմունքային և շարժիչ: Սակայն մեզ շատ քիչ է հայտնի մեր էության այս կողմը: Յուրաքանչյուր կենտրոնում մեզ հայտնի է միայն մեկ մաս: Ինքնադիտարկումը, այնուամենայնիվ, մեզ շատ արագ ցույց կտա, թե մեր պատկերացումներից որքան ավելի հարուստ է մեր հոգևոր կյանքը, բոլոր դեպքերում, ավելի հարուստ է, քան մենք կարծում ենք:

Միևնույն ժամանակ, կենտրոնների աշխատանքն ուսումնասիրելիս մենք կողք կողքի կդիտարկենք ինչպես դրանց ճիշտ աշխատանքը, այնպես էլ դրանց սխալ աշխատանքը, այսինքն՝ երբ մեկ կենտրոնը փորձեր է կատարում փոխարինել մեկ այլ կենտրոնի աշխատանքը, երբ մտավոր կենտրոնը փորձում է զգալ կամ ձևանում է, թե զգում է, երբ զգացմունքային կենտրոնը փորձում է մտածել կամ շարժիչ կենտրոնը՝

մտածել և զգալ: Ինչպես արդեն ասվել է, մի կենտրոնի աշխատանքը մյուսի փոխարեն որոշ դեպքերում կարող է արդյունավետ լինել, քանի որ այն պահպանում է մտավոր գործունեության շարունակականությունը: Սակայն դառնալով սովորություն՝ այն միևնույն ժամանակ վնասակար է դառնում, քանի որ սկսում է խանգարել ճիշտ աշխատանքին՝ թույլ տալով յուրաքանչյուր կենտրոնին թողնել իր սեփական անմիջական պարտականությունները և անել ոչ թե այն ինչ պետք է անի, այլ այն, ինչ ցանկանում է անել տվյալ պահին:

Կարգին առողջ մարդու մոտ յուրաքանչյուր կենտրոն իր աշխատանքն է կատարում, այսինքն՝ հատուկ իր համար նախատեսված աշխատանքը, որը թույլ է տալիս նրան լավագույն կերպով կատարել այն: Կյանքում կան իրավիճակներ, որոնց լուծումը միայն մտավոր կենտրոնը կարող է տալ և որոնցից դուրս գալու ելքը միայն նա կարող է գտնել: Եթե տվյալ պահին նրա փոխարեն սկսում է զգացմունքային կենտրոնն աշխատել, ապա ամեն ինչ խճճվում է. վերջինիս միջամտության հետևանքով արդյունքները կլինեն չափազանց անբավարար: Անհավասարակշռված մարդու մոտ մեկ կենտրոնի փոխարինումը մյուսով գրեթե միշտ շարունակական է, և հենց սա է նշանակում «լինել անհավասարակշռված» կամ «նյարդային»: Յուրաքանչյուր կենտրոն ձգտում է, կարծես, փոխանցել իր աշխատանքը մյուսին և միևնույն ժամանակ կատարել մեկ այլ կենտրոնի աշխատանքը, որի համար նա հարմարեցված չէ: Զգացմունքային կենտրոնը մտավոր կենտրոնի փոխարեն աշխատելիս բերում է զուր նյարդայնության, տենդայնության և շտապողականության այնպիսի իրավիճակներում, որտեղ հակառակը՝ պահանջվում է սառը դատողություն և շրջահացություն: Մտավոր կենտրոնը, աշխատանք տանելով զգացմունքային կենտրոնի փոխարեն, կարող է մտորումների տեղիք տալ այնպիսի իրավիճակներում, որոնք պահանջում են արագ որոշումների կայացում. սակայն դրանք մարդուն թույլ չեն տալիս ըմբռնել տվյալ իրավիճակի առանձանահատկությունները և նուրբ կողմերը: Միտքը շատ դանդաղ է: Այն մշակում է գործողությունների որոշակի ծրագիր և շարունակում է հետևել դրան, չնայած իրադրությունն արդեն փոխվել է և անհրաժեշտ է գործողությունների այլ ընթացք: Բացի այդ, որոշ դեպքերում մտավոր կենտրոնի միջամտությունը հանգեցնում է լիովին սխալ արձագանքի, քանի որ մտավոր կենտրոնն պարզապես ընդունակ չէ հասկանալու շատ իրադարձությունների նրբերանգներ և տարբերություններ: Իրադարձությունները, որոնք շատ տարբեր են շարժիչ և զգացմունքային կենտրոնների համար, նրան նույնը կթվան: Նրա կայացրած որոշումները շատ ընդհանրական են և չեն համապատասխանում այն որոշումներին, որ կնախընտրել կայացնել զգացմունքային կենտրոնը: Սա շատ պարզ կդառնա, եթե պատկերացնենք մտքի՝ տեսաբանող մտքի, ներթափանցումը զգացմունքային, զգայական կամ շարժիչ դաշտ: Բոլոր երեք դեպքերում էլ մտքի միջամտությունը հանգեցնում է ամենաանցանկալի արդյունքների: Բանականությունը չի կարող ըմբռնել զգացմունքների նրբերանգները: Դա կարելի է լավ հասկանալ, եթե պատկերացնենք, թե ինչպես է մի մարդ խոսում մեկ այլ մարդու զգացմունքներից: Նա ինքը ոչինչ չի

զգում, հետևաբար մյուսի զգացմունքները գոյություն չունեն նրա համար: *Կուշտ մարդը չի կարող հասկանալ քաղցածին:* Սակայն վերջինիս համար նրա զգացմունքները ունեն որոշակի գոյություն: Եվ առաջին կենտրոնի, այսինքն՝ մտքի կողմից կայացրած որոշումը երբեք չի կարող բավարարել նրան: Նույնկերպ միտքը չի կարող գնահատել զգացողությունները: Մտքի համար դրանք մահացած են: Միտքը չի կարող նաև վերահսկել շարժումը: Շատ հեշտ է նման օրինակներ գտնել: Ինչ աշխատանք էլ, որ մարդ կատարելիս լինի՝ բավական է յուրաքանչյուր գործողություն մտադրված անի, յուրաքանչյուր շարժումից հետո օգտագործելի միտքը, ապա կնկատի, որ իր աշխատանքի որակը անմիջապես փոխվում է: Եթե մարդը մեքենագրում է, նրա մատները, որ վերահսկվում են շարժիչ կենտրոնի կողմից, ինքնուրույն գտնում են անհրաժեշտ տառերը, սակայն, եթե նա փորձի ամեն տառից առաջ հարցնել. «Որտե՞ղ է «կ» տառը: Որտե՞ղ է ստորակետը: Ինչպե՞ս է այս բառը գրվում:», - ապա նա անմիջապես կսկսի սխալվել կամ շատ դանդաղ գրել: Եթե մեկը մեքենան վարի իր մտքի միջոցով, ապա միայն կկարողանա ամենադանդաղ արագությամբ ընթանալ: Միտքը չի կարող ընթանալ այն արագությամբ, որով ընթանում են բոլոր այն շարժումները, որ անհրաժեշտ են արագ ընթացք զարգացնելու համար: Մտքի աշխատանքի օգնությամբ մաքսիմալ արագությամբ վարելը, հատկապես մեծ քաղաքների փողոցներում, բացարձակապես հնարավոր չէ շարքային մարդու համար:

Երբ շարժիչ կենտրոնը փոխարինում է մտավոր կենտրոնի գործունեությանը, ապա արդյունքում ստացվում է մեխանիկական ընթերցանություն կամ ունկնդրում. մարդը կարդում և լսում է, սակայն ընկալում է միայն բառերն և չի գիտակցում իր կարդացածը կամ լսածը: Սա սովորաբար տեղի է ունենում, երբ ուշադրությունը, այն է՝ մտավոր կենտրոնի գործունեությունը, զբաղված է մեկ այլ բանով, իսկ շարժիչ կենտրոնը փորձում է փոխարինել դրան: Սակայն սա շատ հաճախ վերածվում է սովորության, որովհետև մտավոր կենտրոնին սովորաբար շեղում են ոչ թե արդյունավետ աշխատանքը, միտքը կամ մտորումները, այլ պարզապես անուրջները և երևակայությունը:

«Երևակայությունը» կենտրոնների սխալ աշխատանքի հիմնական աղբյուրն է: Յուրաքանչյուր կենտրոն ունի իր երևակայության և անուրջների ուրույն ձևը, սակայն, որպես կանոն, ինչպես շարժիչ, այնպես էլ զգացմունքային կենտրոնները օգտվում են մտավոր կենտրոնից, որը շատ հեշտությամբ այս նպատակով անցնում է այդ կենտրոնների տրամադրության տակ, քանի որ այն հակված է անրջելու: Անրջելը ամբողջովին հակասում է «արդյունավետ» մտավոր գործունեությանը: «Արդյունավետ» նշանակում է որոշակի նպատակի ուղղված գործողություն, որը ձեռնարկվում է՝ որոշակի արդյունքներ ձեռք բերելու համար: Անուրջները որևէ հստակ նպատակներ չեն հետապնդում, որևէ արդյունքների չեն ձգտում: Անուրջների դրդապատճառը միշտ ընկած է զգացմունքային կամ շարժիչ կենտրոններում: Իրական գործունեությունը իրականացնում է մտավոր կենտրոնը: Անրջելու հակվածությունը մասամբ պայամանավորված է մտավոր կենտրոնի ծուլությամբ,

այսինքն՝ նրա ձգտումներով խուսափել աշխատանքի համար ջանք գործադրելուց, որն ի տարբերություն նախորդի՝ ուղղված է որոշակի նպատակի և ունի որոշակի ուղղություն: Մասամբ էլ այն պայմանավորված է նրանով, որ զգացմունքային և շարժիչ կենտրոնները հակված են կրկնվել, կենդանի մնալ և վերստեղծել նախկինում վերապրած կամ «երևակայած» հաճելի կամ տհաճ տպավորությունները: Տհաճ և հիվանդագին երևակայությունը ներհատուկ է մարդկային մեքենայի անհավասարակշիռ վիճակին: Ամեն դեպքում, կարելի է հասկանալ հաճելի անուրջները և տրամաբանական պատճառաբանություն տալ դրանց: Տհաճ բնույթ կրող անուրջները իսկական անհեթեթություն են: Մինչդեռ շատ մարդիկ իրենց կյանքի ինը տասնորդական մասն անց են կացնում նման ցավագին ցնորքների մեջ՝ պատկերացնելով իրենց կամ իրենց ընտանիքին սպասվող դժբախտությունները, հնարավոր հիվանդությունները, որոնցով նրանք կարող են վարակվել, կամ նրանց սպասվող տանջանքները: Երևակայությունը և անուրջները մտավոր կենտրոնի սխալ աշխատանքի օրինակներ են:

Երևակայության և անուրջների գործունեության դիտարկումը սեփական անձի ուսումնասիրության շատ կարևոր մասն է կազմում:

Ինքնադիտարկման հաջորդ առարկան պետք է լինեն սովորությունները ընդհանրապես: Յուրաքանչյուր հասուն մարդ ամբողջովին բաղկացած է սովորություններից, չնայած՝ շատ հաճախ նա դա չի գիտակցում և նույնիսկ մերժում է այն փաստը, որ որևիցե սովորություն ունի: Նման բան հնարավոր չէ: Բոլոր երեք կենտրոնները լի են սովորություններով, սակայն մարդը դրանք երբեք չի նկատի, եթե չուսումնասիրի բոլոր իր սովորությունները: Սովորությունների դիտարկումը և ուսումնասիրությունը հատկապես բարդ է, քանզի դրանք տեսնելու և «արձանագրելու» համար անհրաժեշտ է գոնե մի պահ փախուստի դիմել և ազատվել դրանցից: Քանի դեռ մարդն առաջնորդվում է որոշակի սովորությամբ, նա չի նկատում այն, սակայն այդ սովորության դեմ պայքարելու հենց առաջին փորձից, որքան էլ որ թույլ լինի այն, մարդը սկսում է զգալ և նկատել սովորությունը: Հետևաբար դրանք դիտարկելու և ուսումնասիրելու համար մենք պետք է փորձենք նրանց դեմ պայքարել: Սա ինքնադիտարկման համար գործնական մեթոդ կարող է հանդիսանալ: Ավելի վաղ ասեցի, որ մարդը չի կարող որևէ բան փոխել իր ներսում, որ նա միայն կարող է դիտարկել և «արձանագրել»: Սա ճիշտ է: Սակայն ճիշտ է նաև այն, որ մարդը որևէ բան չի կարող դիտարկել կամ «արձանագրել», եթե չփորձի պայքար մղել իր դեմ, այն է՝ իր սովորությունների դեմ: Այս պայքարը անմիջական արդյունքներ չի կարող ունենալ, այսինքն որևէ փոփոխություն չի կարող հանգեցնել, հատկապես որևէ մշտական կամ տևական փոփոխությունների: Նման պայքարը մարդու ցույց կտա այն, ինչ կա: Առանց պայքարի մարդը չի կարող տեսնել, թե ինչից է բաղկացած իր անձը: Փոքր սովորությունների հետ պայքարը շատ դժվարին է և տաղտկալի, սակայն առանց դրա ինքնադիտարկումը հնարավոր չէ:

Շարժիչ կենտրոնի նույնիսկ տարրական գործունեության ուսումնասիրությանն ուղղված առաջին փորձերի դեպքում՝ մարդը բախվում է

սովորությունների հետ: Օրինակ՝ մարդը կարող է ցանկանալ ուսումնասիրել իր շարժումները, տեսնել, թե ինչպես է քայլում: Սակայն նրան դա երբեք չի հաջողվի մի վայրկյանից ավել, եթե նա շարունակի սովորականի պես քայլել: Բայց, եթե նա հասկանա, որ նրա սովորական քայլվածքը բաղկացած է մի շարք սովորություններից, օրինակ՝ որոշակի երկարություն և արագություն ունեցող քայլերից, և այլն և, եթե նա փորձի փոխել դրանք, այսինքն՝ քայլի ավելի արագ կամ դանդաղ, անի ավելի մեծ կամ փոքր քայլեր, նա կկարողանա քայլելու ընթացքում դիտարկել ինքն իրեն և ուսումնասիրի իր շարժումները: Եթե մարդը ցանկանում է դիտարկել ինքն իրեն որևէ բան գրելիս, նա պետք է ուշադրություն դարձնի, թե ինչպես է բռնում գրիչը և փորձի այլ կերպ բռնել այն. այս դեպքում դիտարկումը հնարավոր կդառնա: Սեփական անձն ուսումնասիրելու համար մարդը պետք է փորձի քայլել անսովոր ձևով, նա պետք է նստի իրեն ոչ բնորոշ դիրքով, նա պետք է կանգնի այն ժամանակ, երբ սովոր է նստելու, նա պետք է նստի այն դեպքերում, երբ սովոր է կանգնել, և իր ձախ ձեռքով պետք է անի այն շարժումները, որոնք սովորաբար անում է աջ ձեռքով և հակառակը: Այս ամենը նրան հնարավորություն կտա դիտարկելու սեփական անձը և ուսումնասիրելու շարժիչ կենտրոնի սովորությունները և զուգերդությունները:

Զգացմունքների դաշտում շատ օգտակար է պայքարել սեփական բացասական զգացմունքների անմիջական արտահայտման դեմ: Շատ մարդկանց համար դժվար է չարտահայտել իրենց բացասական զգացմունքները, որոնց պատճառը կարող է լինել վատ եղանակը: Մարդկանց համար առավել դժվար է չարտահայտել իրենց զգացմունքները, երբ նրանք զգում են, որ ինչ-որ բան կամ ինչ-որ մեկն, ըստ իրենց, խախտում է կարգն ու արդարությունը:

Բացի նրանից, որ ինքնադիտարկման համար բացասական զգացմունքների արտահայտման դեմ պայքարը լավ մեթոդ է, այն միաժամանակ ունի այլ կարևորություն: Մա այն ամենահազվադեպ ուղղություններից է, որը թույլ է տալիս մարդուն փոխելու իր սեփական անձը կամ իր սովորությունները՝ չստեղծելով այլ անցանկալի սովորություններ: Հետևաբար ինքնադիտարկումը և սեփական անձի ուսումնասիրությունը պետք է ի սկզբանե ուղեկցվեն բացասական զգացմունքների արտահայտման դեմ մղած պայքարով:

Եթե մարդն ինքնադիտարկման ժամանակ հետևի բոլոր այս կանոններին, նա կգրանցի իր գոյի մի շարք կարևորագույն կողմեր: Առաջին հերթին՝ նա անվրեպ հստակությամբ կարձանագրի այն փաստը, որ իր գործողությունները, մտքերը, զգացմունքները և բառերը արտաքին ազդեցությունների արդյունք են և որ ոչինչ իր ներսից չի բխում: Նա կհասկանա և կտեսնի, որ իրականում ինքն արտաքին շարժառիթների որոշակի ազդեցությունների տակ գործող ավտոմատ է: Նա կզգա իր բացարձակ մեխանիկականությունը: Ամեն բան «պատահում» է, նա որևէ բան «անել» չի կարող: Նա մի մեքենա է, որն առաջնորդվում է արտաքին պատահական ցնցումներով: Յուրաքանչյուր ցնցում մակերես է մղում նրա Ես-երից մեկը: Մի նոր ցնցում, և այդ Ես-ը անհետանում է, փոխարենը մեկ ուրիշն է դրա տեղը գրավում: Միջավայրում մեկ այլ փոփոխություն, և նա մեկ անգամ առաջ է գալիս մի նոր Ես:

Մարդը սկսում է հասկանալ, որ ինքն իրեն չի կարող վերահսկել, որ նա չգիտի, թե ինչ կարող է ասել կամ ինչ կարող է անել հաջորդ վայրկյանին. նա սկսում է հասկանալ, որ նույնիսկ մի պահ իր արարքների համար պատասխանատու չէ: Նա հասկանում է, որ եթե նա մնում է նույնը և որևէ անսպասելի գործողության չի դիմում, ապա դա նրանից է, որ որևիցե անսպասելի արտաքին փոփոխություն տեղի չի ունենում: Նա հասկանում է, որ իր գործողությունները ամբողջովին վերահսկվում են արտաքին գործոնների կողմից և համոզվում է, որ իր ներսում հարատև որևէ բան չկա, որևէ մի մշտական ֆունկցիա կամ իրավիճակ, որից կբխեր վերահսկողությունը:

Գ.-ի հոգեբանական տեսություններում կային որոշակի դրույթներ, որ հատկապես գրավեցին իմ ուշադրությունը: Առաջինը՝ սեփական անձի փոփոխության հնարավորությունն էր, այսինքն՝ այն փաստը, որ *ճիշտ ձևով* սեփական անձի ուսումնասիրության դեպքում, մարդը սկսում է փոխել սեփական անձը, ինչպես նաև այն, որ մարդը երբևիցե *ճիշտ չի* ոչ մի հարցում:

Երկրորդը «բացասական զգացմունքները» չարտահայտելու պահանջն էր: Ես անմիջապես դրա մեջ ինչ-որ կարևոր բան նկատեցի: Եվ հետագայում համոզվեցի, որ ես ճիշտ էի, քանի որ զգացմունքների ուսումնասիրությունը և դրանց վրա տարած աշխատանքը ողջ համակարգի հետագա զարգացումների հիմքն էին: Սա տեղի ունեցավ շատ ավելի ուշ:

Երրորդը *շարժիչ կենտրոնի* գաղափարն էր, ինչը շատ գրավեց իմ ուշադրությունը և որի մասին ես լսելուն պես սկեցի խորհել: Ամենազվազվոր հարցը, որ հետաքրքրեց ինձ այստեղ Գ.-ի կողմից սահմանած շարժիչ և բնագոյային գործառույթների միջև հարաբերության հարցն էր: Արդյո՞ք դրանք նույնն էին, թե տարբերվում էին իրարից: Եվ ինչպիսի՞ հարաբերության մեջ էր գտնվում Գ.-ի ստորաբաժանումը սովորական հոգեբանության ստորաբաժանման նկատմամբ: Որոշ վերապահումներով և հավելումներով ես հնարավոր էի համարում ընդունելի համարել հին ստորաբաժանումը, այսինքն՝ մարդու գործողությունների ստորաբաժանումը «գիտակից» գործողությունների, «ավտոմատ» գործողությունների (որոնք սկզբում պետք է գիտակցվեն), «բնագոյային» գործողությունների (որոնք պետք է լինեն նպատակահարմար՝ չգիտակցելով նպատակը), և բարդ ու հասարակ «բնագոյներ», որոնք երբևիցե գիտակից չեն կարող լինել և որոնք կարող են որոշ դեպքերում լինել աննպատակահարմար: Բացի դրանից, կային գործողություններ, որոնք իրագործվում էին թաքնված զգացմունքների ազդեցության կամ անհայտ ներքին մղումների ներքո:

Գ.-ն ողջ այս կառուցվածքը տակնուվրա արեց:

Առաջին հերթին նա ժխտեց «գիտակից» գործողությունները, քանի որ, ինչպես երևում էր նրա խոսքերից, մարդկային գործունեության մեջ գիտակից որևէ բան չկա: «Ենթագիտակից» տերմինի գործածությունը, որը որոշ հեղինակների տեսություններում մեծ տեղ է գտել, լիովին անարդյունավետ էր և նույնիսկ

մուրեցնող, քանի որ տարբեր կատեգորիաներին պատկանող երևույթները դասվում էին «ենթագիտակցության» կատեգորիային:

Գործողությունների ստորաբաժանումը՝ ըստ նրանց վերահսկող կենտրոնների, բացառում էր այս ստորաբաժանման ճշգրտության հանդեպ ամեն տեսակի տարակուսանք և հնարավոր կասկած:

Գ.-ի համակարգում հատկապես կարևոր էր այն մատնանշումը, որ միևնույն գործողությունները կարող էին ձևավորվել տարբեր կենտրոններում: Օրինակ՝ նորակոչիկը և տարեց զինվորը վարժական հրաձգության ժամանակ: Առաջինը պետք է իրականացնի այն՝ օգտագործելով մտավոր կենտրոնը, մյուսն անում է դա՝ օգտագործելով շարժիչ կենտրոնը և դա անում է *շատ ավելի լավ*:

Սակայն Գ.-ն շարժիչ կենտրոնի գործողությունները «ավտոմատ» չէր համարում: Նա օգտագործում էր «ավտոմատ» անվանումը միայն այն գործողությունների դեպքում, որոնց իրագործումը *աննկատ էր մնում մարդու համար*: Նա «ինքնաբերականությանը» մեծ դեր էր հատկացրել և տարբերակում էր շարժիչ գործառույթները ինքնաբերական գործառույթներից, իսկ կարևորագույնն այն է, որ նա ինքնաբերական գործողություններ էր տեսնում բոլոր կենտրոններում. նա, օրինակ, խոսեց «ինքնաբերական մտքերից» և «ինքնաբերական զգացմունքներից»: Երբ ես նրան հարցրեցի բնագոյների մասին, նա կոչեց դրանք «բնագոյային գործողություններ»: Եվ ինչպես հասկացա նրա խոսքերից, արտաքին շարժումներից նա բնագոյներն էր համարում միայն *բնագոյային* գործողություններ:

Ինձ շատ էին հետաքրքրում Գ.-ի կողմից նկարագրվող շարժումների և բնագոյային գործառույթների միջև եղած փոխհարաբերությունը, և նրա հետ իմ զրույցներում ես հաճախ էի անդրադառնում այս թեմային:

Առաջին հերթին, Գ.-ն մեր ուշադրությանն արժանացրեց «բնագոյ» և «բնագոյային» բառերի հաճախակի սխալ գործածությունը: Նրա խոսքերից հասկանալի էր դառնում, որ այս բառերը, օրենքով, պետք է կիրառվեն միայն օրգանիզմի ներքին գործառույթները նկարագրելու համար: Սրտի բաբախյունը, շնչառությունը, արյան շրջանառությունը, մարսողականությունը՝ սրանք են բնագոյային գործառույթները: Միակ արտաքին գործառույթները, որ պատկանում են այս դասին *բնագոյներն են*: Բնագոյային և շարժիչ գործառույթների տարբերությունը հետևյալն էր. շարժիչ գործառույթները, ինչպես մարդու, այնպես էլ կենդանիների՝ թռչունների, շների մոտ *ձեռքբերովի են*, սակայն բնագոյային գործառույթները բնածին են: Մարդկանց մոտ բնածին արտաքին շարժումները շատ հազվադեպ են, իսկ կենդանիների մոտ՝ ավելի հաճախակի, չնայած դրանք կարող են տարբերվել՝ որոշ կենդանիների մոտ դրանք ավելի շատ են, մյուսների մոտ՝ ավելի քիչ: Սակայն այն շարժումները, որոնք սովորաբար համարվում են «բնագոյ» շատ հաճախ մի շարք բարդ շարժիչ ֆունկցիաների համախմբում են, որոնք երիտասարդ կենդանիները սովորում են մեծերից: Շարժիչ կենտրոնի ամենագլխավոր առանձնահատկություններից է ընդօրինակման ունակությունը: Շարժիչ կենտրոնն առանց դատողության ընդօրինակում է այն ամենն, ինչ տեսնում է: Սա գոյություն

ունեցող առասպելների սկիզբն է, որոնք պատմում են կենդանիների հիասքանչ «խելամտությունից» կամ «բնագոյից», որ փոխարինում է խելամտությանը և ստիպում նրանց դիմել մի շարք բարդ և նպատակահարմար գործողությունների:

Անկախ շարժիչ կենտրոնի գաղափարը, որը մի կողմից կախված չէ մտքից, նրա կարիքը չունի և ինքնին միտք է, իսկ մյուս կողմից, ենթակա չէ բնագոյին և առաջին հերթին՝ պետք է սովորի կատարել իր գործառույթները, շատ խնդիրներ նոր հիմքի վրա դրեց:

Շարժիչ կենտրոնի գոյությունը, որը գործում է ընդօրինակման միջոցով, բացատրում է «գոյություն ունեցող կարգի» պահպանումը փետակներում, մրջնաբույներում և տերմիտների բույներում: Առաջնորդվելով ընդօրինակմամբ՝ մի սերունդը ամբողջովին ձևավորվում է նախորդ սերնդի նախատիպի հիման վրա: Որևէ փոփոխություն կամ նախատիպից որևէ շեղում չի կարող լինել: Սակայն «ընդօրինակումը» չի բացատրում, թե ինչպես է նախ և առաջ նման կարգը ստեղծվում: Ես շատ հաճախ ցանկանում էի Գ.-ի հետ քննարկել դա, ինչպես նաև դրա հետ կապված շատ այլ բաներ: Սակայն Գ.-ն խուսափում էր նման զրույցներից՝ ուղղելով դրանք մարդուն և սեփական անձի ուսումնասիրության իրական խնդիրներին:

Այնուհետև, բավականին շատ բան ինձ համար պարզ դարձավ այն գաղափարի շնորհիվ, ըստ որի յուրաքանչյուր կենտրոն ոչ միայն շարժիչ ուժ է, այլ նաև «ընդունող սարք», որը ընդունիչի դեր է տանում տարբեր և երբեմն էլ շատ հեռավոր ազդեցությունների համար: Երբ խորհեցի այն մասին, թե ինչ էր ասվել պատերազմների, հեղաշրջումների, մարդկանց գաղթերի մասին, և այլն, երբ ես պատկերացրեցի, թե ինչպես են մարդկային զանգվածները շարժվում մոլորակային ազդեցությունների ներքո, ես սկսեցի հասկանալ անհատի գործողությունների գնահատման հարցում որտեղ ենք մենք սխալվում: Ընդունված է համարել, որ մարդու գործողությունները ձևավորվում են նրա ներսում: Մենք չենք պատկերացնում, որ «զանգվածները» կարող են բաղկացած լինել «ավտոմատներից», որոնք ենթարկվում են արտաքին ազդակներին և կարող են շարժվել ոչ թե ըստ անհատների կամքի, գիտակցության կամ հակումների, այլ շատ հեռավոր տեղից եկող արտաքին խթանների ազդեցության տակ:

- Կարող են արդյո՞ք բնագոյային և շարժիչ գործառույթները վերահսկվել երկու տարբեր կենտրոնների կողմից, - մի անգամ ես հարցրեցի Գ.-ին:

- Կարող են, - ասեց Գ.-ն, - և դրանց անհրաժեշտ է ավելացնել սեռական կենտրոնը: Սրանք ներքնահարկի երեք կենտրոններն են: Սեռական կենտրոնը բնագոյային և շարժիչ կենտրոններին չեզոքացնող կենտրոնն է: Ներքնահարկը կարող է ինքնուրույն գոյություն ունենալ, քանի որ դրանում առկա երեք կենտրոնները երեք ուժերի առաջնորդներն են: Մտավոր և զգացմունքային կենտրոնները չունեն կենսական անհրաժեշտություն:

- Ներքնահարկում նրանցից ո՞ր մեկն է ակտիվ, որը՝ պասիվ:

- Այն փոփոխական է, - ասեց Գ.-ն, - մի պահ շարժիչ կենտրոնը կարող է ակտիվանալ, իսկ բնագոյայինը պասիվանալ: Մեկ այլ պահին բնագոյայինն է

ակտիվանում, իսկ շարժիչը՝ պասիվանում: Դուք պետք է երկու վիճակների օրինակներ գտնեք ձեր ներսում: Բայց տարբեր վիճակներից բացի կան նաև տարբեր տիպեր: Ոմանց մոտ շարժիչ կենտրոնը ավելի ակտիվ է, իսկ մյուսների մոտ բնագոյայինն է ավելի ակտիվ: Սակայն փաստարկելու նպատակահարմարության համար, և հատկապես սկզբում, երբ անհրաժեշտ է պարզապես բացատրել սկզբունքները, մենք այն դիտարկում ենք որպես մեկ կենտրոն, որն ունի միևնույն մակարդակի վրա գտնվող տարբեր գործառույթներ: Եթե վերցնեք մտավոր, զգացմունքային և շարժիչ կենտրոնները, ապա դրանք գործում են տարբեր մակարդակներում: Շարժիչ և բնագոյային կենտրոնները՝ միևնույն մակարդակի վրա: Ավելի ուշ դուք կհասկանաք, թե ինչպիսի նշանակություն ունեն այս մակարդակները և ինչից են դրանք կախված: